

«Չինական ժամանակակից պատմվածքները»

Փետրվարի 15-ին, ժամը 15:00-ին Հայաստանի ազգային գրաարանի դահլիճում տեղի կունենա «Չինական ժամանակակից պատմվածքները» գրքի շնորհանդեսը: Գրքում զետեղված կարճ պատմվածքներն ընտրված են Չինաստանում 30 տարիների ընթացքում հրատարակված հանրաձանոթ գրական հանդես «Շանհայ Լիթրիչըր»- ից: Դրանք միջնորդավորված լեզվի՝ անգլերենի օգնությամբ հայերեն են թարգմանվել Երևանի Վալերի Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի՝ թարգմանություններով մասնագիտացող ուսանողների ուժերով՝ անգլերենով հաղորդակցման և թարգմանության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Քրիստինե Սողկյանի և դասախոս Աննա Թումասյանի գլխավորությամբ՝ հայերենով ընթերցողներին պարզելով 34 հեղինակի գողտրիկ հետաքրքիր ու

գրավիչ պատմվածքներ: Ժողովածուն կազմել է
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Սերգո Երիցյանը:

Չինական Ժամանակակից դասնվածներ

